

**Գրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots»  
ծրագրերի» համար ՖՏ 2018.**

**«Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանին դպրոցական  
գույքի տրամադրման» ծրագրի ավարտի արարողությունը**

2019 թ. դեկտեմբերի 15-ին, Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանում տեղի ունեցավ «Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանին դպրոցական գույքի տրամադրման ծրագրի» 77,185 ԱՄՆ դուլար արժողությամբ դրամաշնորհային ծրագրի ավարտի արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ջուն Յամադան, Շիրակի մարզպետի տեղակալ Վարդան Գրիգորյանը, Գյումրու քաղաքապետի տեղակալ Հայկ Սուլթանյանը, Գյումրու թիվ 1 արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն Գրիգոր Մկրտչյանը, «Ապագան քոնն է» բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպության նախագահ տիկին Նարինե Սարգսյանը և շատ ուրիշներ, որոնց թվում էին նաև ուսումնարանի աշխատակազմը և ուսանողները:

Ծրագիրը նպատակ ունի տրամադրել նոր և թարմացնել դպրոցի առկա գույքը, որը ներկայումս ունի մասնագիտական կրթություն ստացող ամենաշատ թվով ուսանողներ այս մարզում՝ առաջարկելով մի շարք դասընթացներ, այդ թվում վարսահարդարության, խոհարարության և կար ու ձևի դասընթացներ: Քանի որ դպրոցի գույքը օգտագործվել է Խորհրդային Միության ժամանակաշրջանից սկսած, դրանց մեծ մասը կոտրված կամ մաշված էր: Հետևաբար, դպրոցը գույքի թարմացման խիստ կարիք ուներ: Արդյունքում, ակնկալվում է բարելավվել 246 ուսանողների ուսումնական և 58 ուսուցիչների աշխատանքային միջավայրի պայմանները:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ տիկին Սարգսյանը իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը, ինչպես նաև ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությանը իրենց ներդրման և վստահության համար, որի շնորհիվ «Ապագան քոնն է» ՀԿ-ն արդեն իրականացրել է 3 ծրագրեր, ներառյալ այս ծրագիրը Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Իր հերթին դեսպան Յամադան շեշտեց, որ տվյալ օժանդակությունը մեկն է այն քայլերից, որոնց միջոցով ցուցաբերվում է Ճապոնիայի շարունակական աջակցությունը առողջ կրթական միջավայրի ստեղծման և պահպանման գործում յուրաքանչյուր մակարդակի վրա, հատակապես Գյումրիում:

Այս ծրագրում ներգրավված բոլոր կողմերին մարզպետի և քաղաքապետի անունից նաև շնորհակալություն հայտնեցին Շիրակի մարզպետի տեղակալ Վարդան Գրիգորյանը և Գյումրու քաղաքապետի տեղակալ Հայկ Սուլթանյանը:

Արարողության վերջում ուսումնարանի տնօրեն պարոն Մկրտչյանը դպրոցի բոլոր ուսանողների, նրանց ծնողների և աշխատակազմի անունից երախտագիտության իր խոսքն արտահայտեց դեսպան Յամադային և Ճապոնիայի կառավարությանը նման բացառիկ հնարավորության համար:



Դեսպան Յամադայի  
շնորհավորական ուղերձը



Շիրակի փոխմարզպետ  
պարոն Գրիգորյանի  
շնորհավորական ուղերձը



Շիրակի փոխքաղաքապետ  
պարոն Սուլթանյանի  
շնորհավորական ուղերձը



Ուսումնարանի տնօրեն  
պարոն Մկրտչյանի  
երախտագիտության խոսքը



«Ապագան քոնն է» ՀԿ-ի նախագահ տիկին Սարգսյանի ողջույնի խոսքը



Կար ու ձևի կահավորված սենյակը



Կահավորված խոհարարական սենյակը



Կահավորված դասասենյակը



Կահավորված գրադարանը



Կահավորված վարսահարդարման սենյակը



Դեսպան Յանադան և պարոն  
Մկրտչյանը կտրում են տորթը  
կահավորված բուֆետում